Աշխատանքային օրենսդրության փոփոխություններ/ Լրացուցիչ երաշխիքներ երեխա խնամող աշխատողների համար:

Կոնտակտային անձինք

Սերգի Կոբախիձե
Գործընկեր
Հարկային և իրավաբանական բաժին
sergi.kobakhidze@pwc.com

Ալլա Հախնազարյան
Իրավաբանական պրակտիկայի ղեկավար
Հարկային և իրավաբանական բաժին
alla.hakhnazaryan@pwc.com

Սերգեյ Սարուխանյան
Ավագ Խորհրդատու
Հարկային և իրավաբանական բաժին
sergey.sarukhanyan@pwc.com

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Աշխատանքային օրենսգրքում (այսուհետ՝ «Օրենսգիրք») 03 մայիսի 2023 թվականին ընդունված փոփոխություններով լրացուցիչ երաշխիքներ են նախատեսվում երեխա խնամող աշխատողների համար:

Օրենսգրքի 258-րդ հոդվածի 5-րդ մասը մինչև մեկուկես տարեկան երեխա ունեցող կնոջը լրացուցիչ ընդմիջման հնարավորություն է տալիս պայմանով, որ կինը երեխային կերակրում է կրծքով: Լրացուցիչ ընդմիջումը տրամադրվում է յուրաքանչյուր երեք ժամը մեկ՝ կես ժամից ոչ պակաս տևողությամբ: Ընդ որում երեխային կերակրելու համար նախատեսված ընդմիջումների ժամանակահատվածում աշխատողը վարձատրվում է միջին ժամային աշխատավարձի չափով:

Չնայած նշված հոդվածը միտված է կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությանը, այնուամենայնիվ գործնականում առաջանում են որոշ խնդիրներ, որոնք դժվարացնում, իսկ որոշ դեպքերում նաև անհնար էին դարձնում կանանց օգտվել սույն հոդվածով սահմանված իրենց իրավունքներից: Դժվար է նման ժամանակահատվածում գնալ տուն և հետ վերադառնալ աշխատանքի կամ ապացուցել երեխայի կրծքով կերակրման հանգամանքը:

Օրենսգրքի 258-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված արտոնություններից ավելի արդյունավետ օգտվելու, աշխատանքային պրոցեսը պարբերաբար չընդհատելու տեսանկյունից Օրենսգրքի փոփոխություններով սահմանվել է, որ կնոջ ցանկությամբ լրացուցիչ ընդմիջումները կարող են միացվել իրար և տրամադրվել կնոջ նախընտրած ժամին: Հեռացվել է կրծքով կերակրման պայմանը՝ միաժամանակ բարձրացվել է երեխայի տարիքային շեմը, մեկուկես տարեկանի փոխարեն՝ երկու տարեկան տարիքային շեմ սահմանելով, իսկ աշխատողի վարձատրության կարգին վերաբերող կարգավորումները մնացել են անփոփոխ:

Եթե կրծքով կերակրման նախապայմանը 258-րդ հոդվածի 5-րդ մասից դուրս է գալիս, ապա ինչու՞ է օրենսդիրը լրացուցիչ ընդմիջման արտոնություն տալիս միայն կնոջը:

Օրենսգրքի 258-րդ հոդվածի 5-րդ մասում կատարված վերոնշյալ փոփոխությունն ուժի մեջ են մտել 31.07.2023 թվականին:

Ավելի մանրամասն տեղեկատվության համար խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ

© 2023 PwC. Բոլոր իրավունքները պահպանված են.

Amendments to Labour Legislation/ Additional guarantees for employees caring for children.

Contacts

Sergi Kobaghidze
Partner
Tax, Legal and People Services
sergi.kobakhidze@pwc.com

Alla Hakhnazaryan
Head of Legal Practice
Tax, Legal and People Services
alla.hakhnazaryan@pwc.com

Sergey Sarukhanyan
Senior Associate
Tax, Legal and People Services
sergey.sarukhanyan@pwc.com

If you are interested in additional information, please contact us.

As per the amendments adopted on 03 May 2023, to the Labor Code of the Republic of Armenia (RA) (henceforth referred to as "the Code") the additional guarantees are provided for employees caring for children.

Part 5 of Article 258 of the Code grants a woman who has a child under one and a half years of age the opportunity of taking an additional break, given that she is breastfeeding the child. An additional break is provided every three hours for at least half an hour. Moreover, during the breaks given for feeding the child, the employee is paid based on their average hourly wage.

Although this Article aims to protect the rights of women and children, there are some practical issues that arise, making it difficult, and in certain situations, even impossible for women to exercise their rights as stated in the Article. During this period, it can be challenging for women to go home and return to work, or to provide evidence of breastfeeding their child.

To make better use of the benefits defined by paragraph 5 of Article 258 of the Code, as well as to avoid regularly interrupting the work process, amendments to the Code established that, at the request of a woman, additional breaks can be combined and provided at the woman's preferred time. The condition of breastfeeding has been eliminated, and at the same time, the age threshold for the child has been increased. Instead of one and a half years, the new threshold is set at two year and the standards for employee remuneration remain unchanged.

If the requirement for breastfeeding is no longer a factor in part 5 of Article 258, then why does the legislator still grant an additional break exclusively to women?

The above-mentioned amendment made in part 5 of Article 258 of the Code entered into force on 31.07.2023.

© 2023 PwC. All rights reserved.